




Լ. Հ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՍԱՂՄՈՍՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՆԱԽԾՐԻՆԱԿԸ*

ԼԲ 17. Սուտ է ձի ի փրկութեան իրում. ի բազում զօրութեան իրում ոչ ապրեցուցանէ զհեծեալն (*...էն ձէ չեղիւի ծոնմբօս զծոն զս թօնիցետա*):

Ընդգծված բառը, որը բացակայում է Յոթանասանիցում, ինչպես նաև բոլոր մյուս բնագրերում, հայերեն թարգմանության կողքին ունի միայն Պեշիտտան՝ *lā mpaše l-rākbehi*:

ԼԴ 12. Անժառանգել զանձն իմ խորհեցան յորդոց ի մարդկանէ (*չոտաթեծիծեսա... ձտաչոն տի փալի մո*):

Այստեղ նույնպես ի տարբերություն բոլոր մյուս բնագրերի, ընդգծված բառերն ունեն միայն ասորմոսկրի հայերեն թարգմանությունը և Պեշիտտան՝ *men hnay 'nāsā*:

ԼԴ 21. Բացին ի վերայ իմ զերբանս իրեանց (*եռլատսյան էթ', էթե տն տոմա զտոն*):

Հունարեն *եռլատսյան* բառը, որի դիմաց հայերեն թարգմանության մեջ ունենք բացին, բառացի նշանակում է լայնացրին, ընդարձակեցին: Բոլոր մյուս բնագրերը համաձայն են Յոթանասանիցին, բացի Պեշիտտայից, որտեղ հայերենի նման դրված է բացին՝ *pīaxu*: Նույն բանը դիտվում է նաև Զ 11 համարում, որտեղ մյուս բնագրերի *ռլատսյան տն տոմա* (լայնեա զերբան քո) նախադասության փոխարեն հայերեն թարգմանությունն ու Պեշիտտան ունեն «բաց (pīax) զերբան քո»: *Πλατύνειν* բայը

Հին Կտակարանի հունարեն բնագրում գործածված է ևս 22 անգամ, որից ինը հայերենում թարգմանված է ընդարձակել, հինգը՝ լայնել, երկուսը՝ անդորր առնել, մեկական անգամ՝ յուլանալ, լաճախել, մեծ լինել, տարածել, իսկ երկու անգամ էլ բաց է թողված: Ինչպես տեսնում ենք, չկա մի նոր դեպք, որտեղ այն թարգմանված լինի բանալ:

ԼԸ 6. Ահա չափով եղիր զաուրս իմ (*իծոն չալ ձտաթե թոն տն էթմբաթ մո*):

Ուղիղ բառը, որը երկարության չափ է, Յոթանասանից բնագրում հանդիպում է 7 անգամ, որոնցից երեքի դիմաց հայերեն թարգմանության մեջ ունենք ուղուկ, երեքի դիմաց՝ թիգ, իսկ մեկը չի թարգմանված: Այստեղ էլ ակնհայտ է, որ չափով բառը ծագում է ասորական բնագրից՝ *ba-mšūxīš*: Ինչ վերաբերում է հունարեն բնագրի որոշ ձևափոխություն հանդիպող *ռլատս* (հին, հնուց) տարբերակին, ապա դրան առանձին կարևորություն չպետք է տալ, քանի որ այն գրչական միայն արդյունք է և առավել ևս չէր կարող հայերենում չափով դառնալ:

ԽԱ 4. Եղեն ինձ արտասուք իմ կերակուր (*եթեյնիմի մո տն ձաթոն մո ծրոս*):

Մյուս բնագրերի հաց ծրոս բառի դիմաց կերակուր ունեն միայն հայերեն թարգմանությունը և Պեշիտտան՝ *mekālīš*:

Զ 18. Զի գնացին նոքա ըստ կամս անձանց իրանց (*Πορεύονται ἐν τοῖς ἐπιτηδεύμασιν αὐτῶν*):

* Ծարուհակված «Էջմիածին» ամսագրի 1975 թվականի № № Ա, Դ և Զ-ից:

Այստեղ էլ Աստվածաշնչի բոլոր բնագրերի շարքում ընդգծված բառը հանդիպում է միայն հայերեն թարգմանության մեջ և Պեշիտտայում՝ *d-napšihon*: ԸՋ 28. Եւ ամձիմք մոցա յամձիմս իւրեանց մաշեցան (ի փշչի սօշօն էն չառօն էտլաշօն):

Միայն Պեշիտտայի *wa-napšihon bhon metfarā* նախադասության ազդեցությամբ կարող էր հայերենում հունարեն *ἐν χαιρη* (ի չարիս) բառի փոխարեն դրվել *յամձիմս իւրեանց* (ասոր. = *bhon*, բառացի՝ յինքեանս):

Նախքան հայ-ասորական մնացյալ (երբեմն՝ ոչ էական) ընդհանրությունների թվարկմանն անցնելը, հարկ է կանգ առնել նաև սաղմոսների հայերեն թարգմանության հատուկ անունների տառադարձման առանձնահատկությունների վրա: Հատուկ անուններն այստեղ թեև հիմնականում համընկնում են հունական ձևերին, սակայն առկա են որոշ ուշագրավ շեղումներ: Այսպես, *Bassan* տեղանունը, որը Հին Կտակարանի հունարեն բնագրում գործածված է 42 անգամ, միշտ էլ հայերենում վերարտադրված է *Բասան* ձևով: Միայն երեք անգամ սրա կողքին հայերեն որոշ ձեռագրերում հանդիպում են գրչական բնույթի տարբերակներ՝ *Բանան* (Յեսու ԺԷ 5), *Բասն* (Գ Թագ. Դ 13) և *Բասանաստան* (Յեսու ԻԲ 7): Իրենց բնույթով բոլորովին այլ են սաղմոսների հայերեն թարգմանության առանձին ընդօրինակությունների *Բիշան* (ՄԼԴ 11) և *Բեշան* (ՄԼԵ 20) տարբերակները, որոնց աղբյուրը, ամենայն հավանականությամբ, ասորերեն *Bayšān* ձևն է: Չպետք է զարմանալ, որ *ay* երկարաբառին հայերեն տառադարձության մեջ համապատասխանում է *ի/ե* պարզ ձայնավորը: Ե դարում ասորերենը դեռևս ձայնամիջեր չուներ և կարճ ձայնավորները գրությամբ չէր արտահայտում, այսինքն՝ թեկուզ կարդացվում էր *Bayšān* բաց գրվում էր *Byšān*⁹⁰:

Հետաքրքիր է նաև *Bassan* տեղանվան հետևյալ ստուգաբանությունը. ԿԷ 28 համարում Յորամանիցի *է. ի. Bassan* *ἐπιστρέψω* (ի Բասանայ դարձուցից) նախադասության փոխարեն հայերեն թարգմանության մեջ ունենք՝ «ի միջոյ ժանեաց...կորզեցից»։ Նույնն է նաև Պեշիտտայում և Աստվածաշնչի արաբերեն թարգմանության մեջ՝ *men bēl šennē min bayna-l'* *assinnaṭi*: Այս սխալ վերծանման պատճառը երբայերեն *miḥbāšān* (ի Բասանայ) բառի կազմության առանձնահատկությունն է: Եթե չգիտակցվի, որ սա տեղանուն է, ապա չի կարելի գտնել մի ավելի հստակական ստուգաբանություն, քան «ի միջոյ ժանեաց»։ Այսպիսով, քանի որ Յորամանիցի բնագրի ձեռագրերը չեն պահպանել ձևված ընթերցվածը, հարկադրված ենք ընդունել,

որ այստեղ նույնպես հայերեն թարգմանությունը բխում է Պեշիտտայից: Սրան չի կարող խանգարել այն հանգամանքը, որ նույն ընթերցվածը կա նաև Աստվածաշնչի արաբերեն բնագրում: Թեև վերջինը Ժ դարում թարգմանվել է հունարենից, բայց՝ ասորական միջավայրում, և, ինչպես նկատել են մասնագետները, գերծ չէ Պեշիտտայի ազդեցությունից:

Նմանօրինակ մի դեպքի հանդիպում ենք նաև սաղմոսների ԶԲ 11 համարում, որտեղ Յորամանիցի *է. ի. Bassan* *ἐπιστρέψω* *էն 'A s n d w p* (սատակեցան լԱյեմոյվ) նախադասության դիմաց հայերեն թարգմանության մեջ դրված է՝ «սատակեցան մոցա յական Դովրայ»։ Թեև երբայերենում *'e y n d w r* տեղանունը իսկապես բառացի նշանակում է *ակունք Դովրայ*, սակայն հունարենից փոխադրելիս հայ թարգմանիչը չէր կարող գիտակցել *'A s n d w p* բառի բաղադրիչները, և պետք է տառադարձեր *Այեմոյվ*, ինչպես է, օրինակ, Ա. Թագ. ԻԸ 7 և ԻԹ 1 համարներում: Ուստի հայերեն թարգմանությունը այստեղ ենթադրում է սեմական աղբյուր և, ըստ երևույթին, ստեղծվում ասորական *'endōr* ձևի հետ: Մյուս բնագրերից՝ *ակունք Դովրայ* հանդիպում է միայն արաբերեն թարգմանության մեջ (*'aynu dūr* - *in*): Սակայն այստեղ, եթե նույնիսկ բացառենք Պեշիտտայի ազդեցությունը, արաբ թարգմանիչը, որպես սեմացի, կարող էր կոսմել, որ հունարեն *'A s n d w p* բառը կազմված է *'ayn* և *dūr* բաղադրիչներից:

Ակնհայտ ասորական ծագում ունեն նաև սաղմոսների հայերեն թարգմանության մի շարք այլ հատուկ անուններ: Այսպես, Է 1 համարում որոշ ընդօրինակություններ կողք-կողքի պահպանել են հունարենին և ասորերենին համապատասխանող *Հուս* և *Քոշ* ձևերը (հուն. *Χου* և ասոր. *Kuš*): ԽԴ 12, ԶԲ 8 և ԶԶ 4 համարներում հայերեն թարգմանությունը ունի *Մուր*⁹¹ հունարեն *Μουρος* և ասորերեն *Տուր* բառերի դիմաց⁹²: Մատենադարանի № 142 ձեռագիրը ԽԷ 8 համարում հունարենից բխող *Թարսիս* (= *Θαρσις*) ձևի փոխարեն ունի *Թարշիս* (ասոր. *Taršīš*)⁹³, իսկ ԶԶ 4-ում № 195 ձեռագիրը *Ռահաբ*-ի դիմաց դրել է *Ռախաբ* (հուն. *Ρααβ*, ասոր. *Raxab*): ԾԾԱ 1 համարի *Սաուդ* (հուն. *Σαουλ*) անվանաձևի փոխարեն Ջոհրապյանի ձեռագրերից ունանք *Շաուդ* (ասոր. *Šawī*)⁹⁴ Թերևս սրանց թվին պետք է դասել նաև սաղմոսներում անշատ հաճախ հիշատակվող *Դաիթ* անունը: Թեև ասորական *Dawīd* և հունական *Δαυίδ* (երբեմն՝ *Δαυιδ*) տառադարձությունները իրարից գրությամբ չեն տարբերվում, բայց արտասանությամբ նրանք նույնը չեն: Ասորերենում *d* պաթալյանը (ինչպես նաև՝ *b*, *g*, *k*, *p*-ն) ձայնավորից

⁹⁰ Բիշան փխ Բասան կա նաև Ոսկեբերանի Եսայի գրքի մեկնության աստվածաշնչյան քաղվածքում (Ես. Բ 13). տե՛ս Երանելյուն Յովհաննու Ոսկեբերանի Մեկնություն Եսայի մարգարեի, Վեմետիկ, 1880, էջ 17;

⁹¹ Մուր, Թարշիշ և Շաուդ անունների ասորական ծագումը մշել է դոկտ. Հ. Հյուբշմանը. տե՛ս H. Hübschmann, Armenische Grammatik, New York, 1972, S. 293, 297, 303;

հետո ընկած դիրքում շփակամություն է ձևեր բերում, ստանալով բոլորովին նոր որակ: Այս շփակացած ժ-ի մասավոր վերաբառություններն է ամա հայերեն տատաղարձության բառավերջի թ բաղաձայնը⁹²:

Ինչպես տեսնում ենք, սաղմոսների հայերեն թարգմանության հատուկ անունների բնությունը ևս ի հայտ է բերում հայ-ստորական առնչակցության ակնառու փաստեր:

Հայերեն թարգմանության և Պեշիտտայի մնացյալ համապատասխանությունների ստորև ներկայացվող ցուցակում արձանագրված են միայն այն դեպքերը, երբ սրանք միասին հակադրվում են Աստվածաշնչի բոլոր մյուս բնագրերին: Պատահականություններից խուսափելու համար չեն նշված այն փաստերը, երբ հայերեն թարգմանությունը և Պեշիտտային միանում է Յոթանասնիցից բխող մի երրորդ բնագիր՝ լատիններեն լինի դա, թե դպտերենը կամ սրարերենը՝ միևնույն է, քանի որ այս դեպքերում բացառված չէ, որ ընթերցվածը երբևէ եղել է նաև Յոթանասնիցի ինչ-ինչ ընդօրինակություններում, բայց ձևագրական համագամանքների բերումով մեզ չի հասել: Հասկանալի պատճառներով միակ բացառությունը արված է երրայական բնագրի համար, որը, ինչպես հայտնի է, և՛ Յոթանասնիցի, և՛ Պեշիտտայի սկզբնագիրն է, ուստի հայ-Պեշիտտա = երրայեցի համապատասխանությունները կարող են գոյացած լինել անկախ հունական բնագրերի միջնորդությամբ: Աշխատությունը չծանրաբեռնելու նպատակով ավելորդ ենք համարում մեկ առ մեկ համադրել այլսկզբի բնագրերից կատարվող քաղվածքները: Բերում ենք միայն սաղմոսների հայերեն թարգմանության համապատասխան հատվածները և սոսկ ծանոթագրությունների ձևով նշում մյուս բնագրերի տարբերությունները: Ընդ որում, պետք է հիշել, որ միշտ, երբ գրվում է «մյուս բնագրերում չիք» կամ «մյուս բնագրերում՝ այսպես...», դրանց մեջ չի մտնում Պեշիտտան: Վերջինս խնդրո առարկա կետերում նույնական է սաղմոսների հայերեն թարգմանությանը:

Ե 10. Որպես գերեզման բաց է կոկորդ նոցա: Ընդգծվածը չիք մյուս բնագրերում:

Ե 11. Հատ բազում ամպարշտութեան նոցա մեր-եւս զնոսա, զի դառնացոյցին գրեզ:

Մյուս բնագրերում (բացի երբ.)՝ գրեզ Տէր:

Ե 10. Կատարեսցին չարիք ի վերայ մեղաորաց: Ընդգծվածը չիք մյուս բնագրերում: Մատենադարան, ձեռ. 142՝ ի մեղաորաց:

Թ 9. Ինքն դատի զաշխարհս արդարութեամբ, և զծողովորդս իր ուղղութեամբ:

Մյուս բնագրերում՝ դատի (չբւշտ) փխ և: Հմմտ. ԳԼ 9:

ԺԱ 3. Ի նանիր խօսեցաւ այր ընկերի իւրում:

Մյուս բնագրերում (բացի երբ.)՝ իւրաքանչիւր (չաշտ) փխ այր:

ԺԳ 4. Որպէս ոչ ծանիցեն ամենքեան որ գործեն զանօրէնութիւն, ոչ ուտէին զծողովորդ իմ որպէս կերակուր հացի, և առ Տէր ոչ կարդացին:

Ընդգծվածը չիք մյուս բնագրերում:

ԺԵ 2. Եւ քարիք իմ իմն ի քէն եմ:

Մյուս բնագրերում և որոշ հայերեն ընդօրինակություններում՝ «և քարիք իմ չեն քեզ իմն պիտոյ» (ՆԵ ԴՈՎ ԻՂԱՆՈՎ ԲՈՆ ՆՆ ԴՅԵՎ ԻՂԱՆՈՎ):

ԺԶ 6. Եւ ժառանգութիւն իմ հաճոյ եղև իմն:

Մյուս բնագրերում (բացի երբ.)՝ ընտիր կամ զօրագոյն (չբւշտ) փխ հաճոյ:

ԺԷ 11. Յուցեր իմն զճանապարհս քո կենաց, ցուցեր զիս ուրախութեամբ երեսաց քոց ի քաղցրութենէ վաղելութեան աջոյ քո:

Ընդգծվածը չիք մյուս բնագրերում:

ԺԸ 12. Որպէս կորիւն առիծու զի նստի դարանալ:

Ընդգծվածը չիք մյուս բնագրերում:

ԺԹ 38. Եւ ոչ դարձայ ի նոցանէ մինչև սպառնցից գնոսա:

Մյուս բնագրերում ((բացի երբ.)՝ սպառնցից (չաշտ) փխ սպառնցից գնոսա:

ԺԿ 42. Աղաղակեցին, և ոչ որ էր որ փրկէր զնոսա, կարդացին առ Տէր և ոչ լուսն նոցա:

Ընդգծվածը չիք մյուս բնագրերում:

ԻԱ 20. Եւ Տէր յօգնէ իմն նաչկաց:

Ընդգծվածը չիք մյուս բնագրերում:

ԻԲ 4. Այլ ամաչեսցեն անօրէնք յունայնութեան իրեանց:

Մյուս բնագրերում՝ ի տարապարտոց (ՆԵ ԿՅՎԵՇ) փխ յունայնութեան իրեանց:

ԻԶ 1. Տէր լոյս իմ և կեանք իմ ես յումէ՝ երկկայց, Տէր ապաւեն կենաց իմոց ես յումէ՝ դողացայց:

Մյուս բնագրերում՝ զարհուրեցայց (ՆԵ ԿՅՎԵՇ) փխ դողացայց:

ԻԸ 9. Օգնական իմ լեր Տէր, և մի անարգեր զիս: Ընդգծվածը չիք մյուս բնագրերում և Մատենադարանի № 195 ձեռագրում:

ԻԹ 11. Առաջնորդեա իմն ի շափոս քո ուղիս:

Ընդգծվածը չիք մյուս բնագրերում:

ԻԼ 10. Թագաւորեսցէ Տէր լախեան:

Ընդգծվածը չիք մյուս բնագրերում:

Լ 9. Եւ ոչ մատնեցեր զիս ի ձեռս նեղաց իմոց:

Ընդգծվածը չիք մյուս բնագրերում:

Լ 20. Որպէս զի՝ բազում է ողորմութիւն քաղցրութեան քո:

Ընդգծվածը կա միայն Պեշիտտայում և երբայական բնագրում, սակայն վերջիններս իրենց ճեղքին չունեն քաղցրութեան բառը:

ԼԱ 5. Եւ զանօրէնութիւնս իմ ոչ ծածկեցից ի քէն... և դու թողես զամենայն ամպարշտութիւնս մեղաց իմոց:

⁹² Հյուրըմանը Դատիք անունը դրել է հունարենից փոխառալ հատուկ անունների շարքը: Անդ, էջ 334: Հ. Աճառյանն ավելի զգույշ է. «հայտնի չէ թե որտեղից է առաջացել հայերենում թ վերջաձայնը, որ ոչ մի լեզվի մեջ էլ չկա». տե՛ս Հ. Աճառյան, Աշխ., էջ 22—23:

Ընդգծվածը չիք մյուս բնագրերում:

ԼԲ 10. Ամարգէ Տէր գլխորհուրդս ժողովրդոց:

Ընդգծվածը չիք մյուս բնագրերում:

ԼԲ 18. Աչք Տեսան ի վերայ երկիւղածաց իւրոց:
Մյուս բնագրերում՝ ահա աչք... (ιδού οι ἐφθαλμοί...):

ԼԳ 11. Բայց ոչ խնդրեն զՏէր՝ մի պակասեսցէ
ի անցանէ ամենայն բարութիւն:

Մյուս բնագրերում՝ «մի պակասեսցին յամենայն
բարութիւն» (οὐκ ἐλαττωθήσονται παντός ἀγαθού):

ԼԴ 6. Եւ հրեշտակ Աստուծոյ հաղածեսցէ զնոսա:
Մյուս բնագրերում՝ Տեսան (αὐτοῦ) փխ Աստուծոյ:

ԼԴ 25. Եւ մի ասացեն ի սիրտս իւրեանց թէ վաշ
վաշ ամնաց մերոց զի ընկուզաք զնա:

Մյուս բնագրերում՝ «և մի ասացեն թէ ընկուզաք
զնա» (μὴ δὲ εἰπασαν καταπίομεν αὐτόν):

ԼԵ 12. Մի եկեսցէ ի վերայ մեր ոտն ամբարտա-
ւանից, և ձեռք մեղատրաց մի դողացուցեն զմեզ:

Մյուս բնագրերում՝ ինձ (μοί) փխ ի վերայ մեր.
և՛ զխ (με) փխ զմեզ:

ԼԶ 22. Ոչք օրհնեն զՏէր՝ ժառանգեսցեն զերկիր:
Մյուս բնագրերում և որոշ հայերեն ընդօրինակու-

թյուններում՝ զնա (αὐτόν) փխ զՏէր:

ԼԷ 8. Զի նետք քո հարան յիս, և յիս հաստատե-
ցաւ ձեռն քո:

Մյուս բնագրերում՝ հաստատեսցեր զձեռն (ἐπεστέ-
ρισας... τῇ γειῆρα) փխ հաստատեցաւ ձեռն:

ԼԸ 8. Իսկ արդ ո՛վ է համբերութիւն իմ թէ ոչ դու
Տէր:

Ընդգծվածը չիք մյուս բնագրերում:

ԽԱ 8. Ծարաւի է անձն իմ առ քեզ Աստուած
հօգօր և կենդանի:

Ընդգծվածը չիք մյուս բնագրերում:

ԽԲ 2. Բոխեսցէ սիրտ իմ զպատգամս քո բարիս:
Մյուս բնագրերում և որոշ հայերեն ընդօրինակու-

թյուններում՝ զբան (λόγος) փխ զպատգամս
(աւոր. petgāme):

ԽԴ 4. Աճ գտր ընդ մէջ քո:

Մյուս բնագրերում՝ յազդեր (ἐπὶ τὸν μῦθόν) փխ
ընդ մէջ: Ըստ երևոյթիւն, մէջ է թարգմանվել աւոր-
երենն աչք բառը, որը նշանակում է և ազդր, և
մէջք:

ԽԶ 8. Սաղմոս ասացէք նմա օրհնութեամբ:

Մյուս բնագրերում և որոշ հայերեն ընդօրինակու-
թյուններում իմաստութեամբ (συνετός) փխ օրհնու-
թեամբ:

ԽԾ 21. Զայս ամենայն արարեր և եւ լոցի քեզ:
Ընդգծվածը չիք մյուս բնագրերում:

ԾԳ 5. Եւ ոչ համարեցան զքեզ Աստուած ստաշի
իւրեանց:

Մյուս բնագրերում՝ եղին (προέβεντο) փխ հա-
մարեցան, և չիք՝ զքեզ:

ԾԺ 6. Զինէն էին խորհուրդք անցա ի չարութիւն:
Մյուս բնագրերում՝ ամենայն խորհուրդք (πάντες
οἱ διαλογισμοί) փխ խորհուրդք:

ԾԼ 18. Եղեր իմ պաշտպան և տուն ապաւինի
յաւոր նեղութեան իմոյ:

Մյուս բնագրերում՝ ապաւին (καταφυγή) փխ տուն

ապաւինի: Հմմտ. Լ 2:

ԿԲ 2. Ծարաւեաց առ քեզ... մարմին իմ որպէս
երկիր անապատ և անջուր:

Մյուս բնագրերում՝ յերկրի (ἐν γῇ) փխ որպէս
երկիր:

ԿԶ 2. Աստուած մեր ողորմեա մեզ և օրհնեա
զմեզ:

Մյուս բնագրերում և որոշ հայերեն ընդօրինա-
կություններում չիք մեր:

ԿԷ 2. Յարիցէ Աստուած և ցրուեսցին ամենայն
թշմամիք անոռա:

Ընդգծվածը չիք մյուս բնագրերում:

ԿԸ 29. Զնշեսցին անքա ի դպրութենէ քումմէ
կենաց, և ընդ արդարս քո մի գրեսցին:

Ընդգծվածը չիք մյուս բնագրերում:

Հ 15. Բերան իմ պատմեսցէ զարդարութիւնս քո,
զօրհանապազ զգովութիւնս քո:

Մյուս բնագրերում՝ զփրկութիւնս (τῇ σωτηρίαν)
փխ զգովութիւնս: Հմմտ. ԼԴ 28:

ՀԶ 9. Կամ ի սպա՞ն արգելցէ զողորմութիւն իւր
յինէն:

Ընդգծվածը չիք մյուս բնագրերում:

ԶԲ 14. Աստուած իմ արա զնոսա որպէս զանի,
որպէս զեղէզն առաջի հողմոց:

Մյուս բնագրերում՝ առաջի երեսաց (κατὰ πρόσω-
πόν) փխ առաջի: Նույնն է նաև ԼԴ 5 համարում,

տակայն այստեղ հայերեն բնագրին և Պեշիտտային
էմանում է նաև արաբերեն թարգմանությունը:

ԶԴ 9. Լուաք զի՞նչ խօսի Տէր Աստուած մեր:
Մյուս բնագրերում և որոշ հայերեն ընդօրինա-

կություններում՝ լուաց (ἀκούσονται) փխ լուաք:
Մյուս բնագրերում չիք մեր:

ԶԴ 10. Սակայն մերձ է առ երկիւղածս իւր փըր-
կութիւն անոռա, բնակել փստաց անոռա յերկրի մե-

րում:

Ընդգծվածը չիք մյուս բնագրերում:

ԶԶ 1. Հիմունք անոռա ի լեռնն ի սուրբ անոռա:
Ընդգծվածը չիք մյուս բնագրերում:

ԶԸ 3. Ասացեր թէ աշխարհս ողորմութեամբ շի-
նեսցի:

Մյուս բնագրերում՝ «զի ասացեր յախտեան ողոր-
մութիւն շինեսցի» (ὅτι εἶπας Εἰς τὸν αἰῶνα ἔλ-
ξος οἰκοδομηθήσεται): Հայն ու Պեշիտտան նախ և

առաջ համընկնում են նախադասության կառուցված-
քով: Ըստ երևոյթիւն, աշխարհս բառն էլ ծագում է

աւորական բնագրից, քանի որ 'almlā-ն նշանակում
է և յախտեանութիւն, և աշխարհ: Հմմտ. նաև Զ 16,

որտեղ հայերեն թարգմանությունը ունի «եղիցին
ժամանակք անցա յաշխարհի» մյուս բնագրերի «եղի-

ցին ժամանակք անցա յախտեան» նախադասության
փոխարեն:

ԶԼ 13. Զհիսիս և զհարաւ դու արարեր:

Մյուս բնագրերում (բացի եբր.)՝ զծով (ἡλάσσαν)
փխ զհարաւ:

ԶԼ 14. Բո է բազում և քո է զօրութիւն:

Ընդգծվածը չիք մյուս բնագրերում:

ԶԼ 18. Պարծամբ զօրութեանց մերոց դու ես:

Մյուս բնագրերում շրջված՝ **ցրուեա...խտովեա** (σχορπισει... συνταρξσει):
 ՄկԳ 7. Եւ փրկեա զիս ի ջուրց բազմաց:
 Մյուս բնագրերում՝ «փրկեա զիս և ապրեցո զիս ի ջուրց բազմաց» (ἐξελθὼν με καὶ ῥῶσαι με ἐξ ὑδάτων πολλῶν):

ՄկԳ 13. Հաւատարիմ է Տէր յամենայն ի բանս իւր, և արդար է յամենայն ի գործս իւր:
 Մյուս բնագրերում՝ սուրբ (ὁσιος) փիս արդար: Հմմտ. ՄկԳ 17:

ՄկԵ 7. Տալ հաց քաղցելոց:
 Մյուս բնագրերում (բացի երբ.)՝ կերակուր (τροφή) փիս հաց:

ՄկԵ 15. Որ առաքէ զբան իւր յերկիր, վաղվաղ ընթանան պատգամք անրա:

Մյուս բնագրերում՝ զխօս (λόγιον, երբր. 'morl արաբ. kalimatun) փիս զբան. և բան (λόγος, երբ. dbr, արաբ. kalimatun) փիս պատգամք (այս բառի մասին տե՛ս ՄԻ, 2-ի ծանոթագրությունը):

ՄկԵ 18. Հնչեացեն հողմք և գնացեն ջուրք:
 Մյուս բնագրերում՝ հողմք անրա (τὸ πνεῦμα αὐτοῦ) փիս հողմք:

Նշելով սաղմոսների հայ-ասորական բնագրերի ընդհանրությունները, չպետք է, իհարկե, պնդել, որ նկատված բոլոր դեպքերում հայերեն թարգմանությունն անպայման ծագում է Պեշիտտայից: Ինչպես արդեն ընդգծվել է, դերանունները բնագրական համեմատությունների համար անվստահելի նյութ են, և նրանց համընկնումները կարող են երբեմն բուրրովին պատահական լինել⁹⁴: Հայերեն թարգմանությունը և Պեշիտտան որոշ ընթերցվածներում (Թ 9, ԾԺ 18, Հ 15, ԾԺԼ 119, ՄկԳ 13) շեղվելով բոլոր մյուս բնագրերից, կարող էին իրար համապատասխանել մասնականությամբ⁹⁵: Այնուամենայնիվ, համապատասխանությունների մեծ քանակը և հատկապես մի շարք էական ընդհանրությունների առկայությունը ակնհայտ են դարձնում հայերեն թարգմանության և Պեշիտտայի կապը, որը կարելի է բացատրել միմյայց այն հանգամանքով, որ սաղմոսները նախապես հայերեն են թարգմանվել ասորերենից և ապա միայն սրբագրվել ըստ հունարեն բնագրերի⁹⁶: Սրբագրությունը կատարվել է, ըստ երևույթին, հետևյալ եղանակով. ինչ որ հա-

մաձայն է եղել հունարեն բնագրին՝ պահպանվել է, իսկ տարբերությունները վերացվել են: Այս աշխատանքի թծախնդիր իրագործման դեպքում, բնական է, մենք կունենայինք բացարձակորեն Յոթանասնիցին համապատասխանող մի բնագիր: Սակայն խմբագիրների ուշադրությունից երբեմն փրկվել կամ նրանց կողմից անկարևոր են համարվել սկզբնական թարգմանության ինչ-ինչ տարբերություններ⁹⁷: Ուշագրավ է, որ այս երևույթը իր դրսևորումն է գտել նաև սաղմոսների այլ բնագրերում: Այսպես, Յոթանասնիցից թարգմանված հնագույն լատիներեն բնագիրը, Դ դարում Հերոնիմոսի կողմից սրբագրության ենթարկվելով ըստ Ռոդոնիենի վեցիցյան խմբագրության, սրբագրված օրինակում պահպանվել է իր նկատելի հետքերը⁹⁸: Իսկ Պողոս Թելլացին է դարի սկզբին Աստվածաշունչը հունարենից ասորերենի թարգմանելիս, ավանդույթի ճնշման տակ ստիպված է եղել հատուկ անունները վերարտադրել ոչ թե հունական ձևերով, այլ այնպես, ինչպես դրանք տառադարձված են Պեշիտտայում⁹⁹:

Սաղմոսների հայերեն թարգմանության և Պեշիտտայի համապատասխանությունները այնքան ակնհայտ են, որ դժվար թե կարելի լինի դրանք պատահական համարել, քանի որ դրա համար պետք

⁹⁷ Սրբագրության հետևողականության տեսակետից հետաքրքիր են այն դեպքերը, երբ հայերեն թարգմանության մեջ Պեշիտտային համապատասխանող ձևերը պահպանվել են որպես ձեռագրական տարբերակներ. հմմտ. է 10, ԺԵ 2, ԻԶ 9, ԼԶ 22, ՄԴ 2, ԽԶ 8, ԿԶ 2, ԶԴ 9, ԶԼ 18, ԾԺԼ 119, ԾԼԳ 3, ԾԼԴ 21, ԾԼԹ 12: Պետք է ենթադրել, որ Յոթանասնիցի համեմատ խմբագրվելիս, հայերեն թարգմանության գոյություն ունեցած ոչ բոլոր ընդօրինակություններում է հաջողվել թծախնդիր կերպով վերացնել հունարենին հակասող ձևերը: Այդ պատճառով սկզբնական թարգմանության որոշ ընթերցվածներ պահպանվել են մեզ հասած առանձին ձեռագրերում: Ավելորդ չէ այստեղ հիշեցնել, որ մույն բանը նկատվում է նաև սաղմոսների հայերեն թարգմանության հատուկ անունների գործածության մեջ: Լ 20 և ԾԺԷ 11 համարներում Պեշիտտային համապատասխանող ձևերը մույնիսկ հանդես են գալիս հայերեն թարգմանության միևնույն նախադասության մեջ հունարենին համապատասխանող ձևերի հետ կողք-կողքի: Այստեղ էլ հայ-ասորական ընդհանրությունները համարելով նախնական, կարելի է կարծել, որ կամ Յոթանասնիցին համապատասխանող ձևերը լուսանցագրություններ են եղել և հետո միայն մտել բնագիր, կամ էլ հետագա խմբագիրները ինչ-ինչ նկատառումներով պահպանվել են նաև ըսկզբնական ընթերցվածները:

⁹⁸ Rahfs, S. 54. Սաղմոսների հերոնիմյան այս խմբագրությունը, որը կաթոլիկ եկեղեցու պաշտոնական բնագիրն է, չպետք է շփոթել երբայերենից թարգմանված Վուլգատայի հետ:

⁹⁹ Rahfs, S. 22.

⁹⁴ Հմմտ. սույն աշխ. «Նոտապիում կրկնությունից» դրվագը:

⁹⁵ Հմմտ. սույն աշխ. «Նմանակություն» դրվագը:

⁹⁶ Պետք է զննել, որ շատ հետազոտողների կողմից այսպիսի տեսակետ է պաշտպանվում ընդհանրապես Աստվածաշունչի ողջ հայերեն բնագրի վերաբերյալ: Հետաքրքիր է, որ Մ. Զամչյանը թեև նկատել է վերը նշված հայ-ասորական ընդհանրություններից մի բանից (ԼԴ 12, ԺԵ 2, ԼԵ 12, ԿԴ 2, ԶԴ 9, 10, ԶԼ 3, ԾԺ 3, ԾԺԷ 27, ԾԺԼ 26, 30), բայց հայերեն թարգմանության և Պեշիտտայի միջև ամփոփական կապ չի երևադրել (նշվ. աշխ., հ. Ժ, էջ 58, 170, 180, 291, 405, 407, 423, 502, 521, 526, 528):

Է կարողանալ պատասխանել այն հարցին, թե ինչու այդպիսի էական ընդհանրություններ հազը մեկուսի չունի ոչ մի այլ բնագրի հետ: Ինչպես նշվեց, այս համեմատման միակ բացատրությունն այն է, որ սաղմոսների Յոթանասնիցին համապատասխանող հայերեն բնագիրը սկզբնապես թարգմանված է եղել ստորերեկից: Այսպիսով, կարելի է նկատել, որ սաղմոսների հայերեն բնագրի տվյալներով ևս հավաստվում է հայ պատմագիրների վկայությունը Աստվածաշնչի փութանակի և վերջնական թարգմանությունների գոյության մասին: Մասնագետների հաշվումներով, փութանակի թարգմանությունը կատարվել է անմիջապես գրերի գյուտից հետո, իսկ հունական առույգ օրինակների համեմատ հրա վերջնական խմբագրումը՝ Եփեսոսի ժողովին հաջորդող տարիներին, այն է՝ Ե դարի 30-ական թվականներին: Սակայն մասնավորապես սաղմոսների հայերեն առաջին թարգմանության թվագրումը բախվում է մի կարևոր խնդրի: Մի շարք հետազոտողների՝ Ս. Պարոնյան, Գ. Զարբհանյան, Մ. Տեր-Մովսիսյան, Մ. Օրմանյան, Կ. Թախմիսյան, կարծում են, որ սաղմոսները հայերեն պետք է թարգմանված լինեին դեռևս գրերի գյուտից շատ առաջ, որովհետև անհնար է պատկերացնել հայ եկեղեցու ավելի քան հարյուրամյա պաշտամունքային գործունեությունը առանց դրանց մասնակցության¹⁰⁰: Նրանք ընդգծում են, որ հայ հասարակ ժողովուրդը չէր կարող հաղորդակից լինել ստորերեկ կամ հունարեն լեզուներով կատարվող եկեղեցական արարողությանը¹⁰¹ և, որ նրա հոգևոր պահանջները պետք է բավարարվեին սաղմոսների օտարագիր կամ առնվազն թերանցի հայերեն թարգմանությամբ: Այս տեսակետի հիմնավորումը դեռևս անցյալ դարում տվել է Ս. Պարոնյանը, հենվելով հետևյալ կոմանների վրա¹⁰²:

ա) Սաղմոսների թարգմանությունը նաև մյուս ժողովուրդների, ինչպես, օրինակ, հույների և սլավոնների մոտ կանխել է Ս. Գրքի լիակատար

թարգմանությանը: Ուստի, երբ հայ պատմագիրները հաղորդում են, որ Մաշտոցը Աստվածաշնչի թարգմանությունը սկսեց Սողոմոնի առակներից, դա նշանակում է՝ սաղմոսներն արդեն թարգմանված էին:

բ) Թովմա Արծրունին գրում է, որ մուսնիկ Թ դարում խոթեցիք «գիտեն զսաղմոսսն զհին թարգմանեալսն վարդապետացն Հայոց, զոր համապագի ի բերան ունին»¹⁰³:

գ) Փարպեցին ունի մի հետաքրքիր տեղեկություն ժ.Ձ սաղմոսի 14-րդ տան մասին. «...ըստ գրեցելումն ի վեշտասաներորդ սաղմոսին. «Յագեցան կերակրօք, ասէ,—որ միս ևս թարգման» խոզենաւ ասէ,—և թողին զմնացուածս տղայոց իրեանց»¹⁰⁴: Բանի որ խոզենաւ ընթերցվածը չկա մեզ հայտնի լրել բնագրում, պետք է ենթադրել, որ այն բխում է նախաձեռնողական թարգմանությունից:

դ) Հովհան Ոսկեբերանի վարքի անանուն հույն հեղինակի վկայությամբ՝ «Հայք սուրբ Գրոց թարգմանութիւնը ի Սաղմոսաց սկսան յորդրմամբ սըրբոյ Հայրապետին, երբ նա ի կողմանս նոցա արարուած էր ի փոքր Հայս»:

ե) Հատ Մյունխենի հունական ձեռագրերից մեկի՝ Թեոդոս կաղսեր և Պարսից արքա Վուստապուրի ժամանակ «որովհետև չիկայր մեկը ի Հայս որ զհոռոմ լեզուն գիտենայր, համարձակեցան ոմանք ընդդէմ պատուիրանաց մեծին Գրիգորի (Լուսաւորչի) իրենք իրենց ի հայ լեզու թարգմանել զՍաղմոսս, և եկեղեցական պաշտամանց մէջ ի կիր առնու: Թեոդոս կայսրն զայս լսելով՝ կարի զգրացաւ և պատմեց զՀայս, փոխանակ զի սրբոյն Գրիգորի հրամանէն անցան»:

զ) Այն մատյաններում, որոնք թարգմանված են Աստվածաշնչի թարգմանությունից առաջ (ի նկատի ունի, ըստ երևույթին, Ս. Գրքի վերջնական թարգմանությունը՝ Լ. Տ.—Պ.), ինչպես, օրինակ Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմություն» մեջ, սաղմոսյան մեջերսումները տարբերվում են սաղմոսների մեզ հասած հայերեն բնագրից:

Նույն տեսակետը պաշտպանող մյուս գիտնականները այս ապացույցների վրա որևէ նոր բան չեն ավելացրել, հավանաբար դրանք լիովին բավարար համարելով: Սակայն իրականում պատկեր չկա մի փաստ, որը հակառակ Աստվածաշնչի (որի կազմում նաև սաղմոսների) հայերեն առաջին փութանակի թարգմանության համընդհանուր ճանաչում գտած թվագրմանը:

Հարց է, թե կարելի է արդյոք այդքան կարևորություն տալ Կորյունի այն տեղեկությանը, որ Մաշտոցը «եղեալ սկիզբն թարգմանելոյ զգիրս նախ լուսակացն Սողոմոնի, որ ի սկզբանն իսկ ծանօթս իմաստութեանն ընծայեցուցանէ լինել, ասելով՝ եթէ «ճանաչել զիմաստութիւն և զկրատ, իմանալ գրանս

¹⁰⁰ Գ. Զարբհանյան, նշվ. աշխ., էջ 215—218 (այստեղ քաղվածաբար շարադրված են նաև Ս. Պարոնյանի մտքերը): Մ. Դեր-Մոսեսյան, նշվ. աշխ., էջ 16—24: Մ. Օրմանյան, Հայոց եկեղեցին, Կ. Պոլիս, 1912, էջ 33—34: N. Tahmisjan, Monodische Denkmäler Alt-Armeniens, Die Tradition der armenischen Psalmodie, „Beiträge zur Musikwissenschaft“, Heft 1/1970, S. 29—30: Մ. Զամչյանը չի ընդունում սաղմոսների նախաձեռնողական հայերեն թարգմանության գոյությունը (նշվ. աշխ., և. ժ. էջ 10—11):

¹⁰¹ Հատ Սոթենացու՝ գրերի գյուտից առաջ հայ եկեղեցու արարողությունը կատարվում էր հունարեն լեզվով (Սոթենացի, էջ 301), իսկ ըստ Փարպեցու՝ ստորերեկ (Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, աշխատություն Գ. Տեր-Մկրտչյան և Ստ. Մկրտչյան, Տիֆլիս, 1904, էջ 13):

¹⁰² Գ. Զարբհանյան, նշվ. աշխ., էջ 216—218:

¹⁰³ Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, ի լոյս էած Բ. Պատկանյան, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 121:

¹⁰⁴ Փարպեցի, էջ 41:

հանճարոյ»¹⁰⁵: Ուրիշ բան, եթե Կորյունը հաջորդաբար թվարկեր հաշերեն թարգմանված աստվածաշնչյան գրքերը և սկզբում դներ Սողոմոնի առակները: Իսկ այստեղ մա պարզապես գեղեցիկ գրական հնարանով խորհրդանշաբար ուզել է ընդգծել այն հրաշագործ գլուխի մեծությունը, որով հիմք դրվեց հայալեզու «Ժմաստության» և «Քանճարի»: Մյուս կողմից, եթե քրիստոնեական եկեղեցու համար իրենց ունեցած նշանակության շնորհիվ մախ և առաջ պիտի թարգմանվեին աստվածները, ապա երկրորդ տեղը անհրաժեշտաբար պատկանում է աստվածամեծերին, և ոչ թե Առուկաց գրքին:

Վաղուց արդեն նկատված է, որ Թովմացի տեղեկությունը «հին թարգմանչա» աստվածների մասին, ամենայն հավանականությամբ, վերաբերում է ոչ թե մախամեստրայան, այլ փոթանակի հաշերեն թարգմանությանը¹⁰⁶:

Փարպեցու նշած խոգեմեա տարընթերցվածը, ինչպես նաև Եվսեբիոս Կեսարացու Պատմության ստամոսյան մեջբերումների տարբերությունները նույնպես կարող էին փոթանակի թարգմանությունից բխել, քանի որ սրան ոչ մի ժամանակագրական հանգամանք չի հակասում: Ի դեպ, պետք է հիշել նաև, որ Կեսարացու Պատմությունը թարգմանված է ատորերենից և այս պատճառով էլ կարող էին առաջանալ նշված տարբերությունները:

Հովհան Ոսկեբերանը Հալաստան է աքսորված եղել 404—407 թթ., այսինքն՝ հենց այն ժամանակ, երբ Մեսրոպի և Սահակի կողմից իրագործվել է Աստվածաշնչի ստաջին հաշերեն թարգմանությունը:

Եվ վերջապես, մյունխենյան ձեռագրի տվյալների մասին պետք է ասել հետևյալը. Բյուզանդիայում մեզ հետաքրքրող շրջանում եղել է Թեոդոս անունով երկու կայսր՝ Թեոդոս Մեծ (379—395 թթ.) և Թեոդոս Փոքր (408—450 թթ.): Երկու Թեոդոսների օրոք էլ Իրանում գահակալել են Վոսմ (Bahram) անունը կրող արքաներ՝ Վոսմ Դ (388—399 թթ.) և Վոսմ Ե (420—438 թթ.)¹⁰⁷: Սակայն հավանական է, որ ձեռագրում սխալմամբ Պարսից արքա է կոչվել Հայոց Վոսմշապուհ թագավորը, որը ըստ որոշ գիտնականների՝ թագավորել է 387/8—413/4 թթ., իսկ ըստ այլոց՝ 398/9—413/4 թթ.: Իհարկե սրանով դեռևս չի պարզվում, թե որ ժամանակներին են վերաբերում ձեռագրում նկարագրվող իրադարձությունները, որովհետև առաջին թվագրմամբ Վոսմշապուհի գահակալությունը ընկնում է և Թեոդոս Մեծի, և Թեոդոս Փոքրի տարիներին: Այնուհանդերձ, թվում է, թե խոսքն այստեղ վերջինի մա-

սին է, քանի որ կայսեր կողմից աստվածների թարգմանության համար հաշերին հալածելու պատմությունը արձագանքն է հայկական աղբյուրներից քաջ հայտնի այն իրողության (կամ ավանդության), որ Թեոդոսը դժգոհ էր Մաշտոցից ու Սահակից այն պատճառով, որ նրանք հայոց գրերն աստվծելիս դիմել էին ոչ թե հույն, այլ ասորի գիտնականների օգնությանը¹⁰⁸:

Այսպիսով, ակնհայտ է, որ մասնագետների նշած փաստերը բավարար չեն Դ դարում աստվածների հաշերեն թարգմանության գոյությունը ապացուցելու համար, թեև դրա հնարավորությունը չի կարելի բացառել:

Հայագիտության մեջ առաջ է քաշվել նաև այս խնդրի հետ առնչվող մի այլ հարց: Նկատելով որոշ տարբերություններ աստվածների ժամագրքային և աստվածաշնչական բնագրերի միջև, Ս. Պարոնյանը, Մ. Տեր-Մովսիսյանը և Մ. Օրմանյանը հանգել են այն եզրակացության, որ նրանցում պետք է զանազանել երկու տարբեր թարգմանություններ, մեկը կատարված Դ դարում, մյուսը՝ Ե¹⁰⁹: Ընդ որում, մինչդեռ առաջինը այդ կարծիքը հայտնում է «առանց համարձակօրեն հաստատելու» և բնագրերի տարբերությունները կոչում «մանր», Տեր-Մովսիսյանը դրանք արդեն դարձնում է «խիստ տարբերություններ», իսկ Օրմանյանը երկու թարգմանությունները պարզապես համարում է «ոչիրաւ» զանազանելի:

Եթե ժամագրքի պարունակած աստվածների բնագիրը համեմատության մեջ դրվի Աստվածաշնչի որևէ ոչ քննական հրատարակության հետ, կարելի կլինի, իհարկե, գտնել ոչ միայն մանր, այլ նաև բազմաթիվ էական տարբերություններ: Մասնավորապես այդ է վկայում ժամագրքի վեներիկյան հրատարակությանը¹¹⁰ և Ա. Բագրատունու Աստվածաշնչի համեմատությունը: Սակայն այդ տարբերությունները համարյա ամբողջությամբ չքանում են, երբ ժամագիրքը համեմատվում է Զոհրապայանի հրատարակության հետ, որը, ինչպես հայտնի է,

¹⁰⁸ Հմմտ. Խորենացի, էջ 333—336:

¹⁰⁹ Գ. Զարբհանյան, նշվ. աշխ., էջ 216: Մ. Тер-Мовсесян, նշվ. աշխ., էջ 23: Մ. Օրմանյան, նշվ. աշխ., էջ 33—34: Ըստ երևույթին, նույն բնագրերն է ակնարկում նաև Ն. Ակիմյանը, թեև հանգելով այլ եզրակացության, երբ գրում է. «Ունիվերսալ Սաղմունք...», որոնք հասած են մեզի թե փոթանակի թարգմանությամբ և թե անոր սրբագրել օրինակով: Ոմանք համարած են որ այս կրկին խոսքերը կրկին թարգմանություններ ըլլան: Ուշադիր համեմատությունը այս կրկին խոսքերու իրարու հետ և յուրաքանչյուր բնագրին հետ չի հաստատել այս կարծիքը: Տե՛ս Ն. Ակիմյան, Սուրբ Գրքի հայերեն թարգմանությունը, «Հանդես ամսօրնայ» 1935, էջ 559:

¹¹⁰ Կարգադրություն հասարակաց աղօթից Հաստատանաց եկեղեցու, Վեներիկի, 1898:

¹⁰⁵ Կորյուն, վարք Մաշտոցի, հրատ. Մ. Աբեղյան, Երևան, 1941, էջ 50: Հմմտ. նաև Խորենացի, էջ 327:

¹⁰⁶ Տե՛ս Զավեն Վարդապետ, Նախնական ժամբարությունը, «Մաախ» շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1896, էջ 248: Հ. Անասյան, նշվ. աշխ., էջ 76:

¹⁰⁷ Հայկական ուշ ժամանակագրություններում կոչված նաև՝ Վոսմշապուհ:

արտացոլում է Աստվածաշնչի մի շարք հայերեն ընդօրինակությունների տվյալները: Օրինակ, Ժամագիրքը Գ 7 համարում Զոհրապլանի հիմնական բնագրի «պատեալ պահեալ պաշարէին» ընթերցվածի փոխարեն ունի՝ «պատեալ պաշարեալ պահէին», բայց վերջինս կա նաև տողատակի մի քանի ձևազերծում: Նույն ձևով, Ծ 12 համարում Ժամագիրքը ունի հաստատեալ փխ հաստեալ. ԸՆԲ 2 ի դատաստան փխ ոսոխ. կենդանի փխ մանդի. ԸՆԲ 5 խորհեալ փխ խօսեալ. ԸՆԲ 5 երանի ազգի որոյ փխ երանի ում. ԸՆԲ 8 զգորեալս ՏԵր փխ զգորեալս. ԸՆԲ 1 քաղցր եղիցի փխ քաղցրացի. ԸՆԲ 18 շնչեսցեն փխ հնչեսցեն և այլն, սակայն բոլոր այս ընթերցվածներն էլ կան Զոհրապլանի հրատարակության շողատակում: Ժամագրքից պատահաբար ընտրված Գ, ՁԷ, ԸԲ, ԸՆԲ, ԺԳ, ԸՆԲ, ԸՆԲ, Ը, ԻԹ, ԾԳ, և Ծ սաղմոսների¹¹¹ քննությունը պարզում է, որ նրանք պարունակում են Զոհրապլանի մոտ չնշված միայն հետևյալ տարբերակները. ՁԷ 4 որ փխ որք. ՁԷ 7 ներքնումն փխ ներքնում. ՁԷ 11 գաբանչելիս քո փխ սքանչելիս. ՁԷ 12 քո փխ որ¹¹². ԸԲ 20 որ փխ որ. ԸՆԲ 6 որպես երկիր փխ որպես գերկիր. ԸՆԲ 10 ի յերկիր փխ յերկիր. ԸՆԲ 12 և կորուսես փխ կորուսես. ԺԳ 2, 4 Աստուած փխ ՏԵր. ԺԳ 3 որք փխ որ. ԸՆԲ 9 որք փխ որ. Ծ 10 գուրախութիւն փխ ուրախութիւն: Սակայն նույնքան և դեռ ավելի իրարից շեղվում են նաև Ժամագրքերի տարբեր հրատարակությունները: Այսպես, Ժամագրքի 1866 թ. երուսաղեմյան հրատարակությունը վերը նշված սաղմոսներից միայն առաջին չորսում արդեն վեցերորդական հրատարակության նկատմամբ ունի հետևյալ տարբերակները¹¹³. ՁԷ 5 ընդ այնոսիկ փխ ընդ այնոսիկ. որք փխ որ. ՁԷ 6 որպես զվիրաորս փխ որպես վիրաորս. որք փխ որ. ի գերեզմանս փխ ի գերեզմանի. ՁԷ 11 յարուցեալ խոստովան առնիցին փխ յարուցանիցեն և խոստովան առնիցին. ՁԷ 12 որ փխ քո. ԸԲ 15 ծաղկի փխ ծաղկէ. ԸԲ 17 ողորմութիւն Տեառն մնայ փխ ողորմութիւն Տեառն.

ԸՆԲ 7 նուաղեցաւ փխ նուաղեաց. նմանիցին փխ նմանիցեն. որք փխ որ. ԸՆԲ 8 առաւօտու փխ առաւօտուց. յոր և գնացից փխ յոր գնացից. ԸՆԲ 11 սատակեա փխ սատակեսցես. ԸՆԲ 12 կորո փխ կորուսես:

Դժվար չէ նկատել, որ ժամագրքային սաղմոսները աստվածաշնչականներից տարբերվում են այնքան, որքան Ա. Գրքի երկու ընդօրինակությունները մյուսից, և միայն գրչական քննության այս չնչին անհամաձայնությունները չեն կարող հիմք տալ նրանցում կրկնակ թարգմանությունների տեսնելու:

Կարծիք է հայտնվել նաև այն մասին, որ երկու տարբեր թարգմանություններ են ներկայացնում հայերեն սաղմոսարանների և Աստվածաշնչի պարունակած բնագրերը, սակայն դրա տպառիչ հերքումը տվել է Մ. Չամչյանը¹¹⁴:

¹¹⁴ Մ. Չամչյան, նշվ. աշխ., հ. Ժ, էջ 11:

Ծանոթություն. Սույն աշխատությունը մասամբ արդեն լույս էր տեսել, երբ մեր ձեռքն անցավ Մ. Ա. Ծանիձեի գրքույկը՝ նվիրված սաղմոսների հին վրացական թարգմանություններին (Մ. Ա. Շანიձե, Древнегрузинские переводы «Книги Псалмов», автореферат диссертации на соискание ученой степени доктора филологических наук, Тбилиси, 1974): Հարկ է նշել, որ սաղմոսների հայերեն բնագրի և Պեշիտտայի առնչակցության մասին մեր կրթակազմությունը հաստատվում է նաև վրացերեն թարգմանության տվյալներով: Վրացական հնագույն խմբագրությունները, որոնց աղբյուրը, ըստ Ծանիձեի՝ հայերեն թարգմանությունն է, Պեշիտտային համընկնում են միայն այն դեպքերում, երբ վերջինիս համընկնում է նաև հայերեն բնագիրը: Իսկ երբ հայերեն թարգմանությունը և Պեշիտտան շեղվում են իրարից, ապա վրացական խմբագրությունները որպես կանոն հետևում են հայ բնագրին: Այսպիսով, վրացական հնագույն խմբագրությունների «աստիճանականությունը» արդյունք են ոչ թե Պեշիտտայի հետ անմիջական, այլ հայերեն բնագրով միջնորդավորված կապի: Վրացական բնագրի այս առանձնահատկությունը ցույց է տալիս, որ հայ-առաքելական ընդհանրությունները իսկապես կազմում են սաղմոսների հայերեն թարգմանության հնագույն շերտը:

¹¹¹ Անդ, էջ 3—7, 16, 23—25, 50—52, 134—135:

¹¹² Հսո երևույթին, քո-ն տպագրական վրիպակ է:

¹¹³ Ժամագիրք Հայաստանեայց Ա. Եկեղեցու, Երուսաղեմ, 1866, էջ 10—18:

